

ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Ք

Արևելահայ վերջին խնդիրն ու պատերազմը ¹ :

1854 — ՀՈԿՏԵՄԲԵՐ

17. Առաւօտը ժամը 6 ու կէսին Սեւաստորոշի ռմբակոծութիւնը կը սկսի, 200 թնդանօթով, ու 26 եռայարկ նաւուց օգնութեամբ: Քոռնիլով ռուս ընդհանրական զինակիրն ու ծովապետի փոխանորդը կը սպաննուի: Երկրորդ օրը ռմբակոծութիւնը ցամաքի կողմանէ շարունակեց:

19. Պալմիրի մէջ արեւմտեան տէրութեանց միացեալ նաւատորմիցը Ռէվէլէն կ'ելլէ. 21ին Պսմինեան ծոցոյն մէջ Ռուսիոյ նաւահանգստից պաշարումը կը վերցուի:

23. Պուլ կոմսն առ Էսդերհազի 'ի Պեւլին. — Աւստրիա միաքը չէր դրած ամենկին, որ Բրուսիոյ ազատ և անկախ որոշմանցը արգելք մը հանէ. բայց Վեննայի դաշինքն ալ ապրիլի դաշնագրոյն մէջ ազատ սեպած է ինքզինքն անկախ որոշմունքներ ընելու, թէպէտ և այս որոշմունքները դաշնակցութեան սկզբանցը շատ համամիտ չըլլան: Բրուսիոյ ու Աւստրիոյ կարծեաց տարաձայնութիւնը միայն սկզբանց տարբերութեանը վրայ չէ, հապա գործոց տարբեր կերպով մեկնութիւն տալուն մէջ: Դանուբեան իշխանութիւններէն ռուսական զօրացաշու ելուն մէջ ուրիշ բան չտեսնար Աւստրիա բայց եթէ զինուորական դրից որոշմունք մը, ուր ընդհակառակն Բոլոնիոյ մէջ ռուսական զօրաց միութիւնը սպառնալիք մը կը սեպէ: Վեննայի դաշինքը միշտ մեծ յարգ տուած է գերմանական դաշնակցութեան ժողովոյն առաջարկութիւնը Բրուսիոյ յետ միաբան առաջարկելու, անոր համար փութացեր էր նախ քան նախագահութիւնը բռնող իր գեսպանին գրել ու Պեւլինի դաշինքն առաջարկել իր մտածութիւնները:

25. Լիբրանտի ռուս զօրավարի տեղակալը Պալմիրայի վրայ կը յարձըրի, ու Տաշկան բռնած չորս մարտկոցներուն ու մէջի 11 թնդանօթաց կը տիրէ. բայց Անգղիացւոց ընդգիծութեանը դիմաց կ'արգիլուի իր ընթացքը, որոնց վիշապագունդ զօրքը Ռուսաց ձիաւորները ետ կը մղեն: Այսու ամենայնիւ ձախորդ յարձակման մը մէջ Անգղիացւոց թէթեւ ձիաւորները մեծ կորուստ կ'ունենան:

Ռուսի դաշինքն Բրուսիոյ կրկին անգամ յանձնարարութեանը պատասխանը որ չորս պայմանները ընդունի Ռուսիա. — Բրուսիոյ կրկին խնդրուածքին զինելով և ուղեւոր խնայել Գերմանիոյ ընդգէմ ամէն բաժանմանց ու անմիաբանութեց, պատրաստ է Ռուսաստան ընդունելու խաղաղութեան նախապատրաստիչ 4 պայմանները, ու Աւստրիոյ հետ դաշնակցութեան մը հիմն զանոնք սեպելու:

26. Ռուսք երկրորդ անգամ կը յարձակին

Անգղիացւոց Բ գնդին աջ թևին վր, որոնց հրամաճարարն էր Լէսի Իվլինս զօրավարը, և Չերնայեայի բարձրութեանց վրայ էին: Ռուսք ետ կը մղուին:

30. Բրուսիոյ դաշինքն Աւստրիոյ ամառոյ 23ին տուած պաշտօնագրին պատասխանը. — Այսպիսի ծանր միջոցի մէջ չուզեր Բրուսիա Աւստրիոյ պաշտօնագրին առաջարկութիւնները երկայն բարակ քննել. կը կարծէ ինքը որ եթէ ապրիլի դաշնագրութեանը ստորագրող տէրութիւնները միաբան Ռուսիոյ հրաւերը մը ընեն որ չորս պայմանները միաբանութեամբ հաստատուն խաղաղութեան մը հիմն սեպուին, յաջող ելքի մը կրնայ յուսացուիլ: Բայց այս պատճառաւ շատ հարկաւոր է թէ Բրուսիոյ և թէ բոլոր Գերմանական դաշնակցաց գիտնալը որոշակի թէ Ռուսի կողմանէ այս չորս պայմանները ընդունիլը մինչև որ կէտը գոհ պիտի ընէ զԱւստրիա, և թէ ինչ կերպ պիտի բռնէ Աւստրիա Ռուսիոյ հետ: Եթէ Բեդրպուրկի դաշինքը այս չորս պայմաններու մերժելու ըլլայ, կը ծանուցանէ Բրուսիա որ իր կողմանէ չընդգիծման արամենկին որ Գերմանական դաշնակիցք աւելի ընդարձակեն իրենց օգնութիւնը Աւստրիոյ, եթէ այս վերջնոյս Դանուբեան իշխանութեանց մէջ կեցած զօրքը Ռուսներէն յարձակմունք մը կրեն. և պատրաստ է այս դաշնակցաց աւելի ընդարձակիլը յաւելուած յօդուածով մըն ալ ընդունելու, զորն որ անյապաղ դաշնակցութեան ժողովոյն կը ներկայացընէ:

ՆՈՅԵՄԲԵՐ

2. Աւստրիոյ կայսեր զօրաց տուած հրամանը. — Այս օրու ընէս մինչև 1855 Յունվ. վերջը, բոլոր կայսերական զօրքը ոտքի վրայ պիտի ըլլայ:

5. Ինքերմանի պատերազմը. Ռուսք Տաննընպերկ զօրավարի տեղակալին յառաջնորդութիւնը ու Միքայէլ և Նիկողայոս մեծ դքսից ներկայութեամբ քաջալերուած՝ պաշարող բանակին աջ թևին վրայ կը յարձակին Ինքերմանի բարձրութեց վրայ: Սաստիկ կռուէ մը վերջը Անգղիացիք Գաղղիացւոց Պօքէ զօրավարին հրամանատարութեանը տակ եղած գնդին օգնութեամբ, կը մղեն զՌուսները 9-10,000 մարդ կորսնցընել տալով: Ռուսաց կողմանէ Սոյմոնով զօրավարի տեղակալը, Անգղիացւոց կողմէն ալ Սարէնչի, և Կըլաի առանձին գնդի զօրավարները կը սպանուին: Գէորգ Պրաւըն, Էտեմս (որն որ Դեկտ. 19ին մեռաւ) Պըլլէր և Դորենս զօրավարները ծանր կը վիրաւորուին: Նոյն միջոցին Սեւաստորոշի զօրքն ալ պաշարիչ զօրաց վրայ յարձակմունք մը կը նեն, բայց Գաղղիացւոց Ֆորէ և Լուրմէլ զօրավարներէն ետ կը քշուին: Լուրմէլ մահաբեր կը վիրաւորուի: Դաշնակցաց կորուստը 4126 հոգի կ'ըլլայ, 2400 Անգլ., 1726 հոգի ալ Գաղղիացի:

6. Նեոսէլուոտ կոմսը առ Պարոն Պուտայէրկ, Ռուսիոյ դեսպան 'ի Պեւլին. — Ուղեւոր պահել զԳերմանիա այն ամէն չարիքներէ որ կրնան ա.

¹ Տես հտ. ժ. Գ., էրես 15, 92, 159, 191, 223, 255, 286, 334. հտ. ժ. Դ., էրես 11, 82, 129, 162, 227, 275, 307:

աւջ գալ գաշնակցութեան երկու մեծ տէրութեանց իրարմէ բաժնուէլէն, կայսրը պատրաստ է խաղաղութեան գաշնադրական ժողովին մասնակից ըլլալու: Իբր սկզբունք այս ժողովոյն հետագայ չորս հիմունքը կրնան գրուիլ. Ե. Հինգ մեծ տէրութեանց կողմանէ Օսմանեան կայսրութեան բոլոր քրիստոնէայ հպատակաց, առանց տարբերութեան կրօնից, ամէն կրօնական և քաղաքական իշխանացը երաշխաւորութիւն: Բ. Պաշտպանութիւն Դանուբեան գաւառաց հինգ մեծ տէրութեանց կողմանէ, նոյն պայմաններով ինչ որ առաջուց Դրան և Ռուսիոյ մէջ գրուած են նոյն իշխանութեանց վրայոք: Գ. 1841ին գաշնադրութիւնը կրկին աչքէ անցուի: Դ. Դանուբի նաւագնացութեան ազատութիւն, որն որ իբր իրաւունք արգէն կայ: Կը յուսայ կայսրը որ այս յայտարարութեան վերջը Գերմանական գաշնակցութիւնը ապահով կ'ըլլայ իր շահուցը վրայ. այսու ամենայնիւ եթէ գեւ. նոր պայմաններ առաջարկուին որոնք Ռուսիոյ պատուոյն գէմ կու գան, չի տարակուսիր կայսրը որ որ կողմէն ալ գան այս առաջարկութիւնները, Գերմանական տէրութիւնը կը մերժեն այն սխիւտ պահանջները, և կը սպասէ իրենցմէ կատարեալ չեղոցութիւն մը, ինչպէս որ կռուին սկիզբները հրատարակեալ էին:

7. Տէրմիշ փաշան Եաշ կը հասնի. 10ին Օսմանեան զօրքերը Սատիք փաշային հրամանատարութեանը տակ Մոլտաւիա կը մտնեն:

9. Մ'աւաւիոյ հոգեւոր Կիբա իշխանը Եաշ կը հասնի, և տէրութեան վարչութիւնը ձեռք կ'առնու, պաշտօնէից ժողովը կը փոխուի:

Պուլ կոմսն առ Խոգէրհաղի 'ի Պեռլին. — Աւստրիա չկրնար որ և է պատասխանատուութիւն մը արմաճն առնուլ որն որ ինչ և իցէ կերպով իր ազատութեանը արգէնք մը կ'արեւոյ ըլլալ: Ինքը պարտաւորեալ չէ միայն պաշտպանողական վիճակի մէջ կենալու. և արեւմտեան տէրութեանց նոր առաջարկութիւնները ընելու իրաւունքը կը ձանձնայ, այս տարբերութեամբ՝ որ ինքն ազատ է այն նոր պայմաններն ընդունելու կամ չընդունելու, և ինքզինքը գոհ չկրնար հրատարակել բայց եթէ այնպիսի երաշխաւորութեանց վրայ որոնք ընդհանրապէս ընդունուած ըլլան: Բոլոր այս պատճառներու համար, աւելի պատշաճ կը տեսնայ որ Գերմանական ժողովոյն որոշմունքները ամփոփուած ըլլան այն իրեք գլխոց մէջ որն որ Բրոքէլ-Օսդըն ժողովոյն նախագահութիւն ընող Աւստրիոյ գեսպանին հրահանգին մէջ նշանակուած են. այս հրահանգը անմիջապէս հաղորդելով Գերմանական տէրութեանց՝ կը յուսայ Աւստրիա որ Բրուսիան ալ հաւանի՝ իր տուած հրահանգին համեմատ հրահանգներ ալ իր գեսպանին հաղորդելու: (Իսկ իրեք գլուխները ասոնք են. — Պէտք է որ ժողովքը Ե. Որոշէ որ Աւստրիոյ գէմ եղած յարձակմունք մը, որն որ թէ իր կայսրութեան երկիրներուն գէմ ուղղուած ըլլայ և թէ Դանուբեան իշխանութեանց մէջ գտնուած իր զօրացը գէմ, պարտաւորուի Գերմանիա ամէն միջոցով պաշտպան կենալու և օգնելու Աւստրիոյ: Պէտք է որ Բ. Գերմանական գաշնակցութիւնը իբր Եւրոպա-

կան տէրութիւն, յայտնէ որ հաստատուն խաղաղութեան միջոց մը կը ձանձնայ ինքն ալ այս չորս պայմանները, և իբր Գերմանական տէրութիւն կ'ընդունի որ և կը պահէ մասնաւորապէս այն պայմաններուն առաջինը որ երկրորդը:) Պէտք է վերջապէս ձանձնայ նաև Աւստրիոյ գէմ յարձակման ժողովոյն որ Գերմանիոյ զօրքը պատերազմի վիճակի մէջ գնելու ամէն միջոց 'ի գործ գրուի: Այս պաշտօնագրին հետ է. Ե. Նոյն ամանանով ծանուցագիր մը որուն մէջ Պուլ կոմսը կը ցըցընէ Բրուսիոյ աւստրիական հրահանգին վրայ տուած ծուռ մեկնութիւնը, և Բ. մաքրման հաղորդութիւն մը, որուն մէջ կը յայտնէ Աւստրիա որ թէ պէտ ամէն ատեն խաղաղական ու չափաւորեալ կերպով մը ուղած է իր ազգեցութիւնը ցըցընել, այսու ամենայնիւ ինքը չկրնար գոհ ըլլալ մինչև որ Ռուսիա յայտնի կերպով այս չորս պայմաններն ընդունելու չըլլայ: Այս պաշտառութիւն որ Բեգրպուրիի գահին՝ երկրորդ մերժումն ալ ընէ՝ պաշտօնական հաղորդակցութիւնները պիտի կտրին: Թէ որ շատ ուշանայ Ռուսիա այն չորս պայմանները ընդունելու՝ իրեն իրաւունք կը ձանձնայ գործնական կերպով բռնագատելու զՌուսիա որ ընդունի: Ասկէ զատ, թէ որ իր և Ռուսիոյ մէջ պատերազմ բացուի՝ Աւստրիա ալ անկէ վերջը այն չորս պայմաններով միայն գոհ պիտի չըլլայ:

14. Սև ծովը մեծ մրրիկ մը կ'ըլլէ. վաճառական ու պատերազմի շատ նաւ, որոնց մէջ Գաղղիոյ Ա. կարգի Հէնրիէ-ի. Դ. Նաւը ցամաք կը նետուին:

15. Բրուսիոյ գահին ամսոյս 9ին տրուած աւստրիական պաշտօնագրին պատասխանը. — Բրուսիա գոհ սրտով կը տեսնայ որ երկու արեւելիք արեւելեան կնճռոյն մեծ խնդրոցը մէջ իրենց գերմանացի գաշնակցացը միաբանոր առաջարկութիւն ընելու համար իրենց գրիցը. վախճանին ու միջոցներուն վրայ բաւականապէս միաբան են իրարու հետ: Բրուսիոյ կառավարութիւնը գրեթէ ամբողջապէս կ'ընդունի Աւստրիոյ առաջարկած հրահանգին մէջի իրեք գլուխները: Իր կողմանէ կը փափաքի թագաւորը որ Գերմանական գաշնակցութիւնը որոշմունք մը չըրած, Դանուբեան իշխանութեանց մէջ Աւստրիոյ օգնութիւն ընելու խնդիրը յաւելուած յօգուածով մը որոշուի: Այս պատասխանին հետ խրկուած են երկու ծանուցագիրներ ալ առ Աւստրիա կոմսը Բրուսիոյ վեներաբել գեսպանին, որոնց մէջ Պարոն Մանգայֆէլ կը ձանձնայ որ եթէ Պեռլինի գահին Ռուսիոյ տէրութեան ըրած խնդիրը պատշաճ սեպուի որ Գերմանական գաշնակցութիւնն ալ կրնէ, պէտք է կանխագոյն որոշել որ եթէ այս խնդրոյս երկրորդ մերժում մը գալու ըլլայ՝ ինչ ծանրութիւն պիտի տրուի այն մերժմանը: Այս պատճառաւ կը յուսայ թագաւորը ապահովութիւն մը ընդունելու որ թէ ապրիլի գաշնադրութեան և թէ գերմանական գաշնադրական յօգուածոցը մասացը համեմատ և թէ բոլոր Գերմանիոյ շահուն համար՝ Աւստրիոյ գահին՝ պարտք մը սեպէ իրեն այս պարագաներուն մէջ Բրուսիոյ և բոլոր մէկալ գերմանական տէրութեանց հետ միաբան երթալու: